# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
# «ՇՏԱՊԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ»
## ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

№ 1060

«20» 12 2014 թ.

Ք. Երևան, Զորափի 40

Հեռ.՝ 53-66-12, ֆաքս՝ 53-92-53


«ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով<br>ընթացակարգի հրավերի<br>«ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3»ծածկագրով<br>շրջանակային համաձայնագրերի միջոցով<br>գնում կատարելու ընթացակարգի հնարավոր<br>մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված աշխատանք (ներ):

**Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ՇԲՕ-15/1-ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3»:**

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտը **(1բնօրինակ և 2օրինակ պատճեն)** անհրաժեշտ է ներկայացնել ք.Երևան, փ. Զորափի 40 հասցեով, մինչև **2014թ. դեկտեմբերի 30-ը, ժամը 11:00-ն**: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Լեոնիկ Ալեքսանյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի շենքում, ք.Երևան, փ. Զորափի 40 հասցեով, **2014թ. դեկտեմբերի 30-ին, ժամը 11:00-ին**:

Գնման առարկա է հանդիսանում «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ **«ձևաթղթերի տպագրության»** աշխատանքների ձեռքբերումը:

«Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ **«ձևաթղթերի տպագրության»** աշխատանքների կատարման (որոնք կազմված են 34 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) **N3 Հավելվածում**:

Մասնակիցները հայտով ներկայացնում են[1] իրենց կողմից հաստատված՝

**ա.** գնման ընթացակարգին մասնակցելու դիմում **(Հավելված N 1)**, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

**բ.** գնային առաջարկ **(Հավելված N 2)**: Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով: Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը, ընդ որում, ընտրված (առաջին տեղ զբաղեցրած) մասնակիցը պարտավոր է ծանուցումը (պայմանագիր կնքելու առաջարկը) ստանալուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում և ստորագրելու գնման պայմանագիրը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

«Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ emergency103@gmail.com:

Հարգանքով՝<br>«Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի տնօրեն՝ Թագուհի Ստեփանյան

---

[1] Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, ՀՀ նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ/ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ/ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ/ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև Կարգի 110-րդ կետի 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝
- նման փաստաթղթերի և/կամ/ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և Կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցմամբ)՝ հղում կատարելով ՀՀ նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին՝ ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ/ տվյալները: